Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-169[1]-30.11.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի «պատշաճ ձևով տեղեկացում կամ փաստաթղթերի ուղարկում» հասկացության մեջ «հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերը փոխարինել «հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ (այդ թվում նաև՝ հայտատուի կողմից նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով) կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում նաև՝ հայտատուի կողմից նշված էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3. Այն դեպքում, երբ լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու համար օրենքով սահմանված պետական տուրքը վճարվում է համապատասխան որոշումը կայացնելուց հետո, ապա լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան որոշումները լիցենզավորված անձին

պատշաճ ձևով հանձնվում կամ ուղարկվում են ոչ շուտ, քան օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու օրը:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 23.1-րդ հոդվածով.

«**Հոդված 23.1. Պետական տուրքի վճարումը**

1. Լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախազգուշացվի սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հետևանքների մասին:

2. Հայտատուն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծառայության մատուցման համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու համար օրենքի 26.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված առավելագույն ժամկետը:

3. Հայտատուն լիցենզավորող մարմնին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ

զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան որոշումները:

4. Սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է ճանաչվում: Սույն մասով նախատեսված հայտի մերժման վրա չեն տարածվում սույն օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասության, 32-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ նախադասության, 33-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «աշխատանքային օր հետո» բառերը փոխարինել «աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 5. Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար սույն օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ: Լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել լիցենզիայի տրման ավելի կարճ ժամկետներ»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 26.1-րդ հոդվածով.

«**Հոդված 26.1. Պետական տուրքի վճարման հետ կապված լիցենզավորման ժամկետների երկարաձգումը**

1. Այն դեպքում, երբ հայտատուն, սույն օրենքի 23.1-րդ հոդվածի համաձայն, պետական տուրքը չի վճարում մինչև լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու հայտը բավարարելու մասին որոշման մասին տեղեկացվելը, ապա համապատասխան գործողությունը կատարելու համար սույն օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-

րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետները երկարաձգվում են հինգ աշխատանքային օրով:»:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դ) ենթակետը և 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դ) ենթակետը ուժը կորցրած ճանաչել.

Հոդված 9. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի առաջին պարբերությունում «հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պետական տուրքը չվճարելու հիմքով սույն օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մերժման դեպքի, երբ մերժման մասին որոշում չի կայացվում» բառերով:

2. 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «30 օրվա ժամկետում» բառերը փոխարինել «23 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պետական տուրքը չվճարելու հիմքով սույն օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մերժման դեպքի, երբ մերժման մասին որոշում չի կայացվում» բառերով:

3. 2-րդ մասի երրորդ պարբերությունից հանել «և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացրել է լիցենզավորող մարմին» բառերը:

4. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Լիցենզիա ստանալու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:»

5. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերով լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:»:

Հոդված 10. Օրենքի 30-րդ հոդվածի 4-ր մասի երկրորդ նախադասությունը «պետք է իրականացվի հայտի քննարկում՝ լսումների կարգով» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պետական տուրքը չվճարելու հիմքով սույն օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մերժման դեպքի» բառերով:

Հոդված 11. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի առաջին նախադասությունը «եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պետական տուրքը չվճարելու հիմքով սույն օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մերժման դեպքի, երբ մերժման մասին որոշում չի կայացվում» բառերով:

2. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Լիցենզիա ստանալու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:»

3. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերով լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:»:

Հոդված 12. Օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը «պետք է իրականացվի հայտի քննարկում՝ լսումների կարգով» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ պետական տուրքը չվճարելու հիմքով սույն օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մերժման դեպքի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունը «պետք է իրականացվի հայտի քննարկում՝ լսումների կարգով» բառերից հետո

լրացնել «՝ բացառությամբ պետական տուրքը չվճարելու հիմքով սույն օրենքի 23.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մերժման դեպքի» բառերով:

Հոդված 14. Օրենքի 43-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի աղյուսակի 10-րդ կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2. 2-րդ մասի աղյուսակի 10-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

3. 4-րդ մասի վերջին պարբերությունում «մարմինը» բառից հետո հանել «, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասի աղյուսակի 10-րդ կետում նշված պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների» բառերը:

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 14-րդ հոդվածի առաջին մասի, որն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Էլեկտրոնային հեռահաղորդակցության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

հ/հ	**Առարկության, առաջարկություն հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը**	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
1.	**ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Մ. Սարգսյան**	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ 2005թ. հուլիսի 8-ի թիվ ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված է, որ «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար սույն հոդվածի առաջին մասի համաձայն ծանուցում ներկայացրած անձը պարտավոր է պահպանել ընդհանուր պահանջները, որոնք սահմանվել են կախված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայության տեսակից: Ընդհանուր պահանջները պետք է ընդունվեն Կարգավորողի որոշմամբ, համաձայն թափանցիկության, հավասարության և համարժեքության սկզբունքի»: Առաջարկվում է «Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի	**Չի ընդունվել:** Առաջարկվում է օրենքի նախագծին կից ներկայացնել Կարգավորողի համապատասխան որոշման նախագիծը, ինչպես նաև տեղեկանքում նշել օրենքի նախագծի այն մասերը, որոնք գործելու են Կարգավորողի որոշման ուժի մեջ մտնելուց հետո, սակայն կարծում ենք դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ օրենքի նախագծի բոլոր մասերը գործելու են օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես, իսկ Կարգավորողի կողմից	

		4.2 մասի համաձայն որպես Կառավարության առաջադրած օրենքի նախագծին կից ներկայացվող իրավական ակտ ներկայացնել Կարգավորողի որոշման նախագիծը: Միևնույն ժամանակ առաջարկվում է օրենքի նախագծին կից ներկայացվող իրավական ակտի ընդունման մասին տեղեկանքում նշել օրենքի նախագծի այն մասերը, որոնք գործելու են Կառավարության որոշման կամ իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից»:	ընդունվելիք որոշմամբ պետք է միայն մանրամասնեցվեն այն պահանջները, որոնք արդեն իսկ սահմանված են գործող օրենքում և ներկայացված օրենքի նախագծում:	
2.	**ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Մ. Սարգսյան**	Հաշվի առնելով, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ բարդ լիցենզիան կհանվի 2014թ., ուստի առաջարկվում է օրենքի նախագծում սահմանել բարդ լիցենզիայի դադարեցման ստույգ ժամկետը:	**Ընդունվել է:**	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասնի» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ և 15-րդ հոդվածներում, և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասնի» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ և 4-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

3.	**ՀՀ կառավարություն**	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, 2-րդ մասի 1-ին կետով սահմանված «ծանուցած անձը» բառերը փոխարինել «ծանուցում ներկայացրած անձը» բառերով: Սույն պահանջը բխում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 9-րդ հոդվածի «12^1» թիվը փոխարինել «12.1» թվով, նկատի ունենալով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը: Նույն պահանջը վերաբերում է նաև «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ և 7-րդ հոդվածներով նոր հոդվածների համարներին:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
5.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդվածով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացվող 23.1-րդ հոդվածի 2-րդ մասում «համապատասխան գործողության» բառերը փոխարինել «ծառայության մատուցման» բառերով, քանի որ լիցենզիա տալը, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելը, վերաձևակերպելը, այլ վայրում ևս լիցենզիա տալը հանդիսանում են լիցենզավորող	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություններ:

		մարմնի կողմից ծառայությունների մատուցում:		
6.	**ՀՀ կառավարություն**	Հաշվի առնելով, որ Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է բարդ լիցենզիաների տրման համար ներկայումս գործող 30-օրյա ժամկետի փոխարեն սահմանել 23 աշխատանքային օր, ուստի առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածում լրացնել դրույթ, որով կփոխվի նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում նշված 30 օրվա ժամկետը:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություններ:
7.	**ՀՀ կառավարություն**	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը /այսուհետ՝ նախագիծ/ չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այսպես՝ նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում անհրաժեշտ է «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, որոնց համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը:		
8.	**ՀՀ կառավարություն**	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 1-ին հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ, 22-րդ հոդվածներին, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 14-րդ և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածներին:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

9.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդվածում անհրաժեշտ է «հոդվածի» բառից հետո լրացնել «առաջին մասի» բառերը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, «օրենսդրություն» բառը փոխարինել «օրենսդրության» բառով՝ նկատի ունենալով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդվածի դրույթները, «հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
10.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդվածից անհրաժեշտ է «հետևյալ» բառը հանել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 7-րդ և 11-րդ հոդվածներին:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
11.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 17-րդ հոդվածում անհրաժեշտ է «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

12.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 24-րդ հոդվածում անհրաժեշտ է «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով՝ համաձայն Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների:	**Ընդունվել է:**	Կատարվել է համապատասխան փոփոխություններ:
13.	**ՀՀ կառավարություն**	Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 15-րդ և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածներին:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
14.	**ՀՀ կառավարություն**	Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 3-րդ հոդվածում անհրաժեշտ է «23^1» թիվը փոխարինել «23.1» թվով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 7-րդ հոդվածին:	**Ընդունվել է:**	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: